

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Մելիք-Շահնագարյանը եղել է լայն հետաքրքրությունների տեր մտավորական: Նշանակալից է նրա ներդրումը հատկապես XIX դարի 80-90-ական թվականներին արցախահայության հասարակական-քաղաքական, սոցիալ-կենցաղային հարարերությունների գեղարվեստական արտացոլման ու ժողովրդագիտության ասպարեզում: Նրա ստեղծագործությունն ամբողջությամբ բողոք է ընդդեմ քաղաքական անարդարությունների, դասային արտոնությունների, սոցիալական ունեւորությունների:

Ժամանակի թուր հասարակական ինտիտուտները՝ Պետական դումա, հոգևոր Սինոդ ու արդարադատություն, մերկացվում են Տմրլաչի խաչանի սոցիալական ու քաղաքական ֆելիետոններում: Եվրոպական դիվանագիտության աչառու խաղերի հետևանքները ճաշակած հայ մարդու ամբողջ գայրույթով նա քննադատում է նաև եվրոպական մեծ տերությունների միջամտության հետ կապված սին պատրանքները: Հայրենասեր մտածողի ազգապահպանման ցավն ունի արդիական հնչեղություն և հարավոյն ժամանակների համակցության մեջ շարունակում է մնալ հրատապ:

Անուրանալի է նրա ստեղծած գրական ժառանգության պատմամշակութաբանական արժեքը: Ուսումնասիրության ընթացքում առաջադրվել և լուսարանվել են հետևյալ գիտական խնդիրները՝ 4.Մելիք-Շահնագարյանի կենսագրության շարադրում, գեղարվեստական մտածողության յուրահատկությունների ընթացքում, արևելահայ գրականության և հատկապես երգիծարանության ասպարեզում նրա տեղի և դերի ճշտում, նրա ժողովրդագիտական գործունեության գնահատում, արդի գրականագիտության պահանջների ու չափանիշների դիտակե-

տից՝ առավել ընդունելի ստեղծագործությունների վերլուծում և արժեքավորում:

Ուսումնասիրության արդյունքները, առանց մանրամասների մեջ խորանալու, հանգում են հետևյալ եզրակացությունների:

1. Նախորդ շրջանում գրողի կյանքի և գրական ժառանգության վերաբերյալ գիտական հրապարակումներ չեն եղել: Արխիվային նյութերի և ժամանակակիցների հիշողությունների հիման վրա շարադրվել է 4. Մելիք-Շահնագարյանի գիտական կենսագրությունը և ամբողջացրել նրա կյանքի ու գրական ուղու պատկերը: Ելնելով մեր առջև դրված խնդիրներից՝ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել 4. Մելիք-Շահնագարյանի գրական ու ժողովրդագիտական գործունեությանը:

2. Լուսարանվել է ֆելիետոնի ծնունդն ու զարգացման պատմությունը՝ որպես ակնարկային գրականության տեսակ և գեղարվեստա-հրապարակախոսական ժանր, որի ընդհանուր հատկանիշներն են՝ նյութի այժմեականությունը, շարժունակությունը, առերևույթ անկանխատեսելիությունը, թեթևությունը, կոմպոզիցիայի ազատ կերպը, գեղարվեստական և ոչ գեղարվեստական ժանրերի ու ոճերի պարոդիական կիրառումը: Ընդգծելով ուսումնասիրվող հեղինակի մեծ նախորդների և ժամանակակիցների՝ Պարոնյանի և Օսյանի տեղն ու դերը հայ երգիծարանության մեջ՝ ցույց ենք տվել, որ 4. Մելիք-Շահնագարյանը խորապես յուրացրել է նրանց ստեղծած գրական արժեքներն ընդհանրապես և արևմտահայ ու արևելահայ երգիծական գրականության ավանդները՝ մասնավորապես:

3. Ներկայացրել ենք Արցախ պատմաագագրական շրջանում գոռնա-տմրլա գործիքներով արմատավորված արարողական համա-

կարգը (հարսանիք, տոնախմբություն)՝ որպես ավստրիական կենսընթացի ռադկացուցիչ, երաժիշտ-վարպետների կողմից ժողովրդի մշակութային ժառանգության փոխանցումը և «Ջուռնալ-Տմրլայի» ընտրությունը պայմանավորել ենք ոչ թե պատահական շարժառիթներով, այլ հայ ժողովրդի էթնոկատարողական մտածողության յուրահատկությամբ, այդ նվագարանների գործառույթներով և խորհրդանշային ընկալումներով:

4. Հեղինակի ստեղծագործությունների վերլուծությամբ վործել ենք ներկայացնել XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների Արցախի պատմագագադրական շրջանի և մասնավորապես Շուշիի համայնապատկերը՝ որպես արցախահայերի մտավոր և տնտեսական կյանքի կենտրոն: 1907-1908 թթ. լույս տեսած «Ջուռնալ-Տմրլայ» գրքերի թեմատիկ առումով ռազմագան ֆելիետոններում ընտանեկան-կենցաղային, հասարակական-քաղաքական, ցույց ենք տվել, որ աստիճանաբար Տմրլայի խաչանի երգիծանքը «քաղաքականացվում է»՝ փոքրիկ մանրապատումներում ընդգրկելով լայն շրջանակներ, մերձենալով լյանքի առաջադրած առավել հրաշտապ խնդիրներին:

5. Կ. Մելիք-Շահնագարյանի գեղարվեստական մտածողության ձևավորման ու զարգացման ընթացքը հիմնավորել ենք նրա ֆելիետոնների ու երգիծապատումների վերլուծությամբ, նկատել ենք, որ հեղինակը նույնպիսի հմտությամբ է օգտվել Ղարաբաղի ռարրառի, ռանահյուսության գեղարվեստաարտահայտչական միջոցներից ու պատկերավորման հնարավորություններից, ինչպես Պաղոնյանն ու Օսյանը՝ արևմտահայերենից, Սուրբուկյանը՝ թիֆլիսահայ ռառուրանից: Եվ եթե մեր ժողովրդին նա քիչ է հայտնի, ապա պատճառն այն է, որ Տմրլայի խաչանը իր ֆելիետոնները գրում էր Ղարաբաղի ռարրառով, որն այնքան էլ մատչելի չէր հայ ընթերցող հասարակայնությանն ընդհանուր խավերին:

6. Տմրլայի խաչանի երգիծական ստեղծագործությունների վերլուծությամբ ցույց ենք

տվել, որ հեղինակը իր ստեղծած կերպարները չի խմբավորում հակադիր ռեռոներում: Շատ չեն դրականի անմիջական կերպարային կրողները, սակայն ռացասականի սպանիչ ծաղրով երգիծարանը առտահայտում է իր նվիրվածությունը հակադիր սկզբունքներին:

7. Ժանրի արտացոլման հնարավորությունների ընդլայնման առումով Տմրլայի խաչանի ստեղծագործությունների մեջ առանձնանում է «Ջուռնալ Տմրլայ»-1893, «Ջուռնալ Տմրլայ»-1894, «Ջուռնալ Տմրլայ»-1895 երգիծական վիպակ-ֆելիետոնը: Այստեղ նկարագրվում է խաչանի՝ երագում կատարած ճամվորությունը (Դժոխք-Դրախտ-Լուսնթագ), ուր ոչ այնքան առանձին հերոսների գործողությունների նկարագրությունն է, որքան ռագմաթիվ հերոսների և տիրող պայմանների հակադրության երգիծական վերարտադրությունը: Ֆելիետոն-վրպակում արծարծված այս հարցերի քննության հետ մեկտեղ աշխատության մեջ շոշափել ենք այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխարհի քաղաքական անցուղարծերը, եվրոպական դիվանագիտության աչառու խաղերը, Հայոց Հարցի միջագգային քննության հետ կապված աճպարարությունները:

8. Կ. Մելիք-Շահնագարյանի անձնական ֆոնդում պահպանված գրական հարուստ ժառանգության հետ միասին ուսումնասիրել ենք նրա ժողովրդագիտական, ռանահավաքչական գործունեությունը՝ արցախահայոց վրպական մեծ ու փոքր ծավալի, այլարանական ու ռանաձևային ռանահյուսության նմուշները (հեքիաթներ, գրույցներ, առակներ, հանելուկներ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ), ինչպես նաև ագգագրությանը, ժողովրդական ռժկությանը վերարերող նյութեր: Միաժամանակ դիտարկել ենք, որ ռարրառով գրված նրա ֆելիետոնները ժողովրդական ռանահյուսության նկատմամբ հետաքրքրության ուժեղացման ազղակ են հանդիսացել:

9. Հեղինակը հրատարակել է նաև չափածո և արձակ ստեղծագործությունների մի քանի ժողովածու, ի շարս որոնց հիշատակությանն է

արժանի հատկապես 1907 թ. լույս տեսած «Փնջիկը»՝ հասցեագրված մանուկ ընթերցողներին: Բարոյախրատական րանաստեղծությունների այդ վոլյունը հաստատում է, որ մանկավարժ-մանկագիրը մանուկ ընթերցողների սրտում սեր է պատվաստել հայրենի հողի, հարազատ եզերքի, շրջապատող աշխարհի, ընտանիքի ու աշխատանքի նկատմամբ:

10. Տիրապետելով ռուսերենին, ֆրանսերենին, րարծր գնահատելով նրանցով ստեղծված գեղարվեստական արժեքները՝ Կ. Մելիք-Շահնազարյանն անհրաժեշտ է համարել դրանք թարգմանարար ներկայացնել հայ ընթերցողին: Նա թարգմանել է Կարամզինի «Թշվառ Լիզան», Գյոթեի «Ռայնեքե Աղվեսը», Վերդիցկու «Պատրանք» հինգ գործողությամբ կոմեդիան, թարգմանել կամ փոխադրել է Շչեդրինի, Սարգուսի, Աստիլդա Սերայոյի և այլ հեղինակների երկերից, որոնց մի մասը, ցավոք, մնացել է ձեռագիր վիճակում: Ժամանակաշրջանի համար կարևորություն ներկայացնող և սահուն գրական հայերենով թարգմանված այս գործերը արժեքավորել ենք ռարոյական դաստիարակության միջոցով հասարակության վերափոխման տեսանկյունից:

11. Ուսումնասիրելով Կ. Մելիք-Շահնազարյանի՝ Էջմիածնի մատենադարանում կազմած ձեռագիր ռառարանները (գրարար-աշխարհարար, աշխարհարար-գրարար և ռարրառ-աշխարհարար) ընդգծել ենք դրանց կարևորությունը՝ ժողովրդական ռառուրանը շատերին հասու դարձնելու և ժողովրդական ռանահյուսության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու գործում:

12. Կ. Մելիք-Շահնազարյանը չորս տասնյակի հասնող գյուղատնտեսական գրքեր ու հոդվածներ է հրատարակել («Ուղեցույց գործնական գինեգործության», 1885թ., «Ծխախոտը և իր վնասները», 1888թ., «Ոգելից ընպելիքների

վասասկարությունը», 1889թ., «Ուղեցույց գործնական շերամապահության», 1890թ., «Վագի մշակությունը», 1902թ., «Կտավատը և կանեփը», 1926թ., «Գործնական ձեռնարկ արևի տակ պտուղներ չորացնելու», 1929թ., «Ինչպես պետք է հավաքել դեղարույսերը» (հեղինակակից՝ Վ. Պ. Կալաշնիկով), 1934թ. և այլն)՝ հողի մշակին քայլ առ քայլ մոտեցնելով գյուղատնտեսական գիտության հիմնական օրենքներին:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք, որ Կ. Մելիք-Շահնազարյանը տարեցտարի մշակել է հայերեն լեզվով գյուղատնտեսական տերմինների, տեխնիկական հասկացությունների հարուստ ռառապաշար:

Հայաստանի կլիմայական պայմաններին համապատասխան գյուղատնտեսական գիտելիքների ձեռքբերումը, երկրագործության, գինեգործության, կաթնատնտեսության, շերամապահության, մեղվարածության նորագույն ձևերի գործադրությունը նաև Անդրկովկասում ապրող հարևան ժողովուրդների կյանքում, նրանց կենցաղի ռարելավումն ու ռարքերի ուսումնասիրությունը որոշ ազգագրական երանգ են հաղորդում Կ. Մելիք-Շահնազարյանի հանրային-գյուղատնտեսական գործունեությանը:

13. Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքի և գրական ուղու ուսումնասիրության մեր կողմից կիրառված եղանակը հետապնդել է հեղինակին իր իրական արժանիքներով գնահատելու և արդիական մշանակությամբ լուսարանելու նպատակ:

Հուսանք, որ Կ. Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունները կվերահրատարակվեն, իրենց արժանի գնահատությունը կստանան, և սույն աշխատանքն էլ կարելի չլի չափ կճշտի անվանի երգիծարանի, մանկավարժ-մանկագրի, ժողովրդագետի, թարգմանչի տեղն ու դերը արևելահայ գրականության ու մշակույթի պատմության մեջ: